Թուրքիայի նախագահ Էրդողանը հերթական անգամ խոստովանել է՝ իրենք են փաստացի առաջնորդել 2020 թ. պատերազմը Հայաստանի դեմ Արցախում. «Ինչպես մենք մտանք Ղարաբաղ և Լիբիա, նույն կերպ կարող ենք մտնել Իսրայել»:

Չորեքշաբթի
31 հուլիսի 2024թ.
№ 13 (622)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՀՀ ԱԳ և Ադրբեջանի պաշտպանության նախարարությունները գուժում են հնարավոր նոր պատերազմի մասին. արդյո՞ք համարժեք է մեր արձագանքը.

այդ հարցի պատասխանն ենք ակնկալում Սյունիքում

Ամեն առիթով տարածաշրջանային սրացումներ կանխատեսելու Ադրբեջանի գործելակերպը մտածելու տեղիք է տալիս և գալիս է հիմնավորելու մի շարք կենտրոնների կողմից արվող վերլուծությունները, թե Ադրբեջանն ամեն ինչ անելու է վիժեցնելու Հայաստանի հետ խաղաղության համաձայնագիր կնքելու գործընթացը, 2024 թ. նոյեմբերին Բաքվում կայանալիք COP29 գագաթնաժողովից հետո Հայաստանի Հանրապետության նկատմամբ նոր ագրեսիա ձեռնարկելու համար:

ՀՀ արտգործնախարարություն
19 հունիսի 2024 թ.

«*Հայաստանն ու իր հովանավորները պետք է զերծ մնան նոր պատերազմի օջախ ձևավորելու մտադրությունից»,* – նշված է Ադրբեջանի Պաշտպանության նախարարության 2024 թ. հուլիսի 25-ի հայտարարության մեջ:

Պնդելով, թե վերջին շրջանում հայկական ուժերն իբր ծանր զինատեսակներ են կիրառել Քելբաջարի և անօդաչու սարք՝ Թովուզի ուղղությամբ, ադրբեջանական ռազմական գերատեսչությունը նշում է՝ *«Եթե նման սադրիչ գործողությունները չդադարեն, ապա ինքնապաշտպանության նպատակով Ադրբեջանի զինված ուժերի զինանոցում գտնվող բոլոր միջոցների կիրառմամբ համապատասխան քայլեր կձեռնարկվեն»:*

Ադրբեջանի Պաշտպանության նախարարությունը նաև քննադատել է արևմտյան պետություններին՝ Հայաստանի հետ ռազմական համագործակցությունը խորացնելու համար. *«Միացյալ Նահանգների կողմից Հայաստանում անցկացված զորավարժությունները, Ֆրանսիայի կողմից Հայաստանին մահաբեր զենքերի տրամադրումն ու ԵՄ կողմից՝ Խաղաղության եվրոպական հիմնադրամի քողի ներքո Երևանին 10 միլիոն եվրոյի ռազմական օգնության տրամադրումը, ոգեշնչում են օկուպացիոն Հայաստանին, որպեսզի նոր սադրանքների դիմի և Ադրբեջանի դեմ հերթական պատերազմին նախապատրաստվի»:*

Լեռնահայաստանի երկամյա կռիվների ընթացքում թշնամուն՝ մուսավաթական Ադրբեջանին թե Խորհրդային Ռուսաստանին, չհաջողվեց զինուժով տեր դառնալ մեր գյուղերից անգամ մեկին:

Գարեգին Նժդեհ

Սահմանազատման ինչպիսի՞ կերպ ենք ակնկալում իրական Սյունիքում

Հունիսի 16-ից 18-ը Սյունիքում էր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Այցի առանձին դրվագների վերաբերյալ մեր տեսակետը հայտնելու մտադրություն չունենք, բայց շատ կարևոր մի հարց անկարելի է շրջանցել...

Վարչապետի այցից հետո, կարծեք, ակնհայտ է դառնում, որ սահմանազատման աշխատանքները (Տավուշից հետո) կատարվելու են Սյունիքում:

Ինքը՝ վարչապետը, Կորնիձորում՝ ի պատասխան «Ազատության» հարցի՝ «Հնարավո՞ր է՝ սահմանազատման հաջորդ փուլը հենց Սյունիքից սկսվի», ասաց՝ «Այո, հնարավոր է...»:

Սահմանազատման վերաբերյալ խոսակցություններ են եղել սյունիքյան այլ հանդիպումներում ևս: Այդ ամենն էլ առիթ է հանդիսացել, որ մարզում խնդրո առարկայի վերաբերյալ՝ հանրության տարբեր շերտերում, քննարկումներ սկսվեն:

Եվ ուրեմն՝ ի՞նչ նկատառումներ կամ մտահոգություններ ունեն սյունեցիներն ակնկալվող սահմանազատման վերաբերյալ: Բուն թեմային անցնելուց առաջ մեկ անգամ ևս փաստենք՝ Սյունիքում դժվար թե գտնվի գիտակից մեկը, ով դեմ կլինի սահմանազատման, ապա և սահմանագծման գործընթացին, բայց...

* * *

Կա հարցերի մի խումբ, որ (ուզենք-չուզենք) պետք է պարզվի, պարզաբանվի:

Նախ՝ այլևս չկա այն Սյունիքը, որ ունեցել ենք 2020 թ. պատերազմից առաջ և նույնիսկ պատերազմից հետո, անգամ 2022 թվականին: Սյունիքի մարզը պատերազմից առաջ ունեցել է (ըստ պաշտոնական տվյալների) 4506 քառ. կմ տարածք:

Որքա՞ն է Սյունիքի տարածքն այսօր. այդ մասին ստույգ տեղեկություն որևէ մեկը չունի:

Այդ իրողության շարունակությունը կամ հետևանքը....

Արդյո՞ք մարզի բոլոր տարածքներում հստակ է, թե ներկայումս որտեղով է անցնում Սյունիքի արևելյան սահմանը՝ սկսած Գորայքի ամառային արոտավայրերից մինչև Մեծ Իշխանասար ու Սև լիճ և այդպես շարունակ՝ դեպի հարավ-արևելք ու հարավ: Տեղեկություններ ունե՞նք, թե սահմանի որ մասն է սահման՝ պետական իմաստով (գործող օրենքի իմաստով), որ մասը՝ շփման գիծ:

Երկրորդ. Ադրբեջանը Սյունիքի ուղ-

Շարունակությունը՝ էջ 7

ՀՊՄԿ-ն կրկին առաջինն է 1000 խոշոր հարկատուների ցուցակում



ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հրապարակել է 2024թ. երկրորդ եռամսյակի 1000 խոշոր հարկատուների ցանկը: Այդ տվյալների համաձայն՝ ՀՊՄԿ-ն ավելի քան 29 միլիարդ դրամով ավելացրել է հարկային վճարումները՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Ընթացիկ տարվա հունվար-հունիս ամիսներին կոմբինատը վճարել է 64,049,045 հազար դրամ հարկ: Այս ցուցանիշով ՀՊՄԿ-ն կրկին առաջինն է 1000 խոշոր հարկատուների ցուցակում:

Պետական եկամուտների կոմիտեն հայտնում է, որ ՊԵԿ պաշտոնական կայքում հրապարակվել է 2024 թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի և վճարների վերաբերյալ տեղեկատվությունը:

2024 թ. առաջին կիսամյակում 1000 խոշոր հարկ վճարողների կողմից պետական բյուջե է վճարվել 900.4 մլրդ դրամ, որը կազմում է Պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների շուրջ 76%-ը, իսկ վերադարձը նվազեցնելու դեպքում՝ 72 %-ը: Նախորդ տարվա համեմատ 1000 խոշոր հարկ վճարողները վճարել են շուրջ 25.9 մլրդ դրամ ավելի (որից՝ 3.8 մլրդ դրամը շահութահարկ), մասնավորապես, այն դեպքում, երբ մաքսային մուտքերը նվազել են 72 մլրդ դրամով:

Նախորդ տարվա համեմատ խոշոր հարկ վճարողների ցանկում տեղ են գտել 274 հարկ վճարողներ, որոնք նախկինում ընդգրկված չեն եղել ցանկում: Վերջիններիս կողմից վճարված գումարի չափը կազմում է 90.6 մլրդ դրամ: Այս երևույթը վկայում է այն մասին, որ խոշոր հարկ վճարողների ցանկը պարբերաբար փոփոխվում է՝ համալրվելով նոր հարկ վճարողներով, ինչն էլ իր հերթին վկայում է տնտեսության դինամիկայի մասին:

408 հարկ վճարողներ նախորդ տարվա համեմատ բարելավել են իրենց դիրքերը և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վճարել են 106.3 մլրդ դրամ ավելի գումար: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ԱԱՀ մասով կտրուկ աճերը կարող են պայմանավորված լինել ընկերությունների ընտրած բիզնես մոդելով, ունենան կարճաժամկետ արտացոլում վճարված ԱԱՀ մասով, սակայն ավելի խորքային վերլուծության դեպքում ակնհայտ կլինի, որ վճարված ԱԱՀ վերադարձ է տեղի ունենում: Տարընկալումներից խուսափելու համար ՊԵԿ-ը պատրաստակամ է հարցերի դեպքում տրամադրել պարզաբանումներ:

Ոլորտային վերլուծության ցուցանիշների համաձայն, նախորդ տարվա համեմատ առավել խոշոր աճ են հայտարարագրել մեծածախ և մանրածախ առևտրի, մշակող արդյունաբերության և հանքագործական արդյունաբերության, իսկ առավել մեծ նվազում՝ էլեկտրականության, գազի մատակարարման, ինչպես նաև ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտներում գործունեություն ծավալող հարկ վճարողները:

1000 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ ցանկը հասանելի է ՊԵԿ պաշտոնական կայքի «Տեղեկություն հարկ վճարողների վերաբերյալ» բաժնի «Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր» ենթաբաժնում:

26.07.2024



ՆԳ նախարարը Սյունիքի մարզում աշխատանքային խորհրդակցություններ է անցկացրել ոստիկանների և փրկարարների հետ

Հուլիսի 11-ին Սյունիքի մարզ կատարած այցի շրջանակում ՆԳ նախարար Վահե Ղազարյանը ոստիկանության Սյունիքի մարզային վարչության և ենթակա ստորաբաժանումների անձնակազմի հետ անցկացրել է աշխատանքային խորհրդակցություն:

Ասնակցում էին ՆԳ նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը, Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության պետ Վաղինակ Մարտիրոսյանը, Ոստիկանության պետի տեղակալ-պարեկային ծառայության պետ Արթուր Խուդինյանը, Սյունիքի մարզային վարչության պետ Վարդան Մկրտչյանը:

Քննարկվել են տարբեր հանցատեսակների դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող միջոցառումների վերաբերյալ հարցեր: Հատկանշվել են, մասնավորապես, թմրամիջոցների դեմ պայքարի, ապօրինի զենք-զինամթերքի հայտնաբերման ուղղությամբ իրականացվող հետևողական միջոցառումները: Անդրադարձ է կատարվել Ոստիկանության բարեփոխումներին, մասնավորապես՝ նոր Քրեական ոստիկանության ու Համայնքային ոստիկանության ձևավորմանն ու կադրային համալրմանը:

ՆԳ նախարարը հորդորել է ակտիվացնել մասնակցությունն ատեստավորմանը, ինչը սոցիալական երաշխիքները բարձրացնելու հնարավորություն է:

Քննարկվել են նաև Սյունիքի մարզային վարչության և ենթակա ստորաբաժանումների աշխատանքի արդյունքները: Վեր են հանվել բացթողումներն ու նախանշվել թերացումների վերացման ուղղությամբ լուծումներ:

Նույն օրը ՆԳ նախարարն աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել նաև Պարեկային ծառայության Սյունիքի մարզի գումարտակի ծառայողների հետ:

Կարևորվել է ճանապարհատրանսպորտային պատահարների կանխմանն ուղղված շարունակական միջոցառումների անցկացումը:

Անդրադարձ է կատարվել պարեկների բարեվարքությանը. ընդգծվել է քաղաքացիների հետ գրագետ հաղորդակցության ու բարեկիրթ կեցվածքի կարևորությունը: Քննարկվել են նաև ծառայությանն առնչվող այլ հարցեր:

ՆԳ նախարար Վահե Ղազարյանն ու նախարարության ղեկավար կազմն այցելել են նաև Սյունիքի մարզային փրկարարական վարչություն:

ՆԳ նախարարը շրջել է փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնում, ծանոթացել շենքային պայմաններին ու տեխնիկական հնարավորություններին:

Փրկարարական վարչությունում խորհրդակցության ժամանակ քննարկվել են ատեստավորման փուլերի, այդ թվում՝ սոցիալական երաշխիքների բարելավման վերաբերյալ հարցեր:

Քննարկվել են նաև անտառներում հրդեհների կանխարգելման ու արագ արձագանքման, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների հարցեր:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը նշեց Հանքագործի և մետալուրգի օրը

Կապանի լեռնահարստացման կոմբինատի գլխավոր տնօրեն Սասուն Ավետիսյանի ուղերձը՝ Հանքագործի եւ մետալուրգի օրվա առթիվ

Հարգելի գործընկերներ, Կապանի և Լիճքվազի լեռնահանքային համալիրների սիրելի աշխատողներ, ընդերքի ու մետալուրգիայի ոլորտի վաստակաշատ մասնագետներ, շնորհավորում եմ մասնագիտական տոնի՝ Հանքագործի և մետալուրգի օրվա առթիվ:

Լեռնահանքային ոլորտում Հայաստանում աշխատում է ավելի քան 10000 մարդ, այստեղ են մեր պետության խոշորագույն արդյունաբերական ձեռնարկությունները, որոնց աշխատանքը կենսական դերակատարում ունի ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու բարեկեցության, երկրի տնտեսական զարգացման և պաշտպանունակության ապահովման գործում: Դա է պատճառը, որ այս տոնն իրենցն են համարում ոչ միայն լեռնահանքային համալիրների և մետալուրգիական ձեռնարկությունների աշխատողները, այլև գիտակակրթական, նախագծային և հետազոտական կազմակերպությունների սովորողներ ու աշխատողներ, հարակից ոլորտների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Արտադրական մշակույթի՝ տասնամյակներով հղկված ամուր ավանդույթների և գիտական-տեխնոլոգիական նորարարության շարունակական համադրումն այս ոլորտում զարգացման և առաջընթացի հիմնական բանաձևն է: Այսօր Կապանի լեռնահարստացման կոմբինատի հանքային տեխնիկայի նորացման, հարստացուցիչ ֆաբրիկայի նախագծային հզորությունների վերականգնման և մոդեռնիզացման, Լիճքվազի լեռնահանքային համալիրում հանքաքարի վերամշակման նոր հզորությունների ստեղծման աշխատանքներին լայնորեն ներգրավված են Հայաստանի առաջատար գիտական նախագծային կազմակերպությունների մի շարք ներկայացուցիչներ: «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ հետ կնքված պայմանագրով՝ սահմանված կարգով, Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի պաշարների վերագնահատման աշխատանքները շուտով ավարտին կհասցնի Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը: Մտադիր ենք առաջիկայում համագործակցության հուշագիր կնքել Երևանի պետական համալսարանի հետ՝ ի թիվս համագործակցության այլ ճակատների՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի հետ սերտ աշխատանքը համարելով երկարաժամկետ հեռանկարում մեր ձեռնարկությունների կադրային ապահովման կարևոր գրավական:

Հարգելի գործընկերներ, Կապանի և Լիճքվազի լեռնահանքային համալիրների սիրելի աշխատողներ, ընդերքի ու մետալուրգիայի ոլորտի վաստակաշատ մասնագետներ, այս առիթն օգտագործելով ձեզ շնորհակալություն եմ հայտնում բարեխիղճ աշխատանքի, մեր ընդհանուր նպատակներին հասնելուն ուղղված անձնվեր ջանքի համար. մաղթում եմ Ձեզ և ձեր հարազատներին ամուր առողջություն, կատարած գործից, գրանցած արդյունքներից բավարարվածության բերկրանք և անսահման երջանկություն:

21.07.2024

Տոնական միջոցառումները մեկնարկեցին «Komatsu» ընկերության հետ համատեղ միջոցառմամբ՝ հանքի տարածքում ներկայացնելով տոնական ցուցադրություն՝ «Komatsu»-ի տեխնիկայի պարն Արամ Խաչատրյանի երաժշտության ներքո: Միջոցառմանը ներկա էին նաև հյուրեր տարբեր երկրներից՝ «Կոմացու» ընկերության ներկայացուցիչներ, Հայաստանում գործող տարբեր հանքարդյունաբերական ընկերությունների ներկայացուցիչներ, ոլորտի մասնագիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Դա յուրօրինակ նվեր էր ծանր տեխնիկայի հետ աշխատող հանքագործներին՝ ոլորտի ժամանակակից տեխնիկայի կարողությունների ցուցադրություն:

«Մեր ընկերության ամենօրյա աշխատանքում մենք օգտագործում ենք ժամանակակից սարքավորումներ և ներդնում ժամանակակից տեխնոլոգիաներ: «Komasu»-ն ժամանակակից շինարարական և հանքարդյունաբերական տեխնիկայի արտադրության համաշխարհային առաջատարներից է: Մեր հանքում շահագործվում է «Komasu»-ի 24 տեսակի տեխնիկա տարբեր նպատակների համար: Միայն 2022-ին 25,7 միլիոն դոլարի արժողության 21 միավոր տեխնիկա ձեռք բերելու պայմանագիր ենք կնքել», – իր ելույթում նշել է ԶՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին:

«Komatsu» ընկերության Կենտրոնական Ասիայի գլխավոր տնօրեն Տոմոշի Կիցուվան շնորհակալություն հայտնեց ԶՊՄԿ-ին՝ արդյունավետ համագործակցության եւ տարածաշրջանի խոշորագույն հանքարդյունաբերական ընկերության ամենօրյա աշխատանքներն ընկերության տեխնիկային վստահելու համար:

Քաջարանի մշակույթի պալատում ԶՊՄԿ աշխատակիցների համար տեղի ունեցավ տոնական միջոցառում, որի ընթացքում կայացավ ԶՊՄԿ-ի պատմության տարեգրքի ռուսերեն տարբերակի շնորհանդեսը:

* * *

Քաջարանի մշակույթի պալատում հուլիսի 19-ին նշվեց դեռևս խորհրդային տարիներից եկող Հանքագործի և մետալուրգի օրը: Տոնական միջոցառմանը մասնակցում էին ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը, նրա տեղակալ Արման Խոջոյանը, «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիյը, ձեռնարկության ղեկավար կազմը, Կապանի և Քաջարանի համայնքապետեր Գևորգ Փարսյանն ու Մանվել Փարամազյանը, Քաջարանի տարածաշրջանի հոգևոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը, հրավիրված անձինք, հանրապետության զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Մշակույթի պալատի դահլիճին կից ճեմասրահում տեղի ունեցավ Սոս Դավթյանի հեղինակած՝ կոմբինատի 70-ամյա տարեգրությունն ամփոփող «ԶՊՄԿ ՓԲԸ. հանքաշխարհի լեգենդը» գրքի ռուսերեն տարբերակի շնորհանդեսը: Նոր լույս տեսած գրքի՝ հեղինակի մակագրությամբ օրի-

Շարունակությունը՝ էջ 8

Մեղրիում տեղի է ունեցել համայնքապետի փոփոխություն

Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի հոկտեմբերի 17-ի ընտրություններում Մեղրի համայնքում որոշակի քվեներ ստացան Սամվել Բաբայանի գլխավորած «Ազատական» կուսակցությունը և Արամ Հ. Սարգսյանի գլխավորած «Հանրապետություն» կուսակցությունը:

Ավագանու անդրանիկ նիստից առաջ երկու այդ կուսակցության ներկայացուցիչները դաշինք կազմեցին՝ Մեղրու ավագանիում կազմելով մեծամասնություն:

Կողմերը պայմանավորվեցին նաև՝ հինգ տարի տևող ընտրաշրջանում համայնքապետի պաշտոնը զբաղեցնել հերթականությամբ. նախ՝ 2.5 տարի կղեկավարի «Հանրապետություն» կուսակցության ներկայացուցիչ Բագրատ Հաբարյանը, այնուհետև՝ «Ազատական» կուսակցության ներկայացուցիչ Խաչատուր Անդրեասյանը:

Ս. թ. մայիսի 16-ին լրացել է Բագրատ Հաբարյանի պաշտոնավարման ժամկետը, որից հետո Մեղրի համայնքի ղեկավարի պաշտոնը, պայմանավորվածության համաձայն, ստանձնել է Խաչատուր Անդրեասյանը:

Այդ փոփոխության, ինչպես և նոր համայնքապետի անելիքների, Մեղրի համայնքում գործերի վիճակի մասին է զրույցը նորընտիր համայնքապետ Խաչատուր Անդրեասյանի հետ:

– Պարոն Անդրեասյան, շնորհավորում ենք Մեղրի համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելու առիթով և ցանկանում հաջողություններ: Սա մեր առաջին հանդիպումն է, և ցանկանում ենք զրույցը սկսել հարցից, որը հանրության կողմից ոչ միանշանակ է ընդունվել՝ ինչպե՞ս կամ ի՞նչ հանգամանքների արդյունքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի փոփոխությունը:

– Նախ՝ շնորհակալ եմ Մեղրի համայնքով հետաքրքրվելու համար: Ինչ վերաբերում է փոփոխությանը՝ ի սկզբանե Բագրատ Հաբարյանի հետ ունեինք պայմանավորվածություն, և կարողացանք անցած երկուսուկես տարում համայնքի ղեկավարումը տանել բնականոն հունով, հասնել այս հանգրվանին: Փոփոխությունն անցավ հանգիստ, առանց որևէ տարաձայնությունների: Այսպես ասեմ՝ մենք ընդամենը փոխվել ենք աթոռներով: Այն ամենը, ինչ նախանշել ենք մեր համայնքի համար, միասին պիտի ավարտին հասցնենք, և ձգտելու ենք առաջիկա երկուսուկես տարում ավելի շատ անել, քան նախորդ ժամանակահատվածում:

– Ինչ խոսք, դուք մի թիմ եք եղել, բայց հնարավո՞ր են՝ աշխատանքի, գործելակերպի առաջնահերթությունների փոփոխություններ համայնքապետարանի գործունեության մեջ:

– Փոփոխություններ անպայման կլինեն: Յուրաքանչյուր մարդ յուրովի է մտածում: Արդեն ասացի՝ մեր համագործակցությունը շարունակվելու է, սակայն մենք չենք կարող նույն կերպ մտածել. մտքերի ու գործելակերպի տարբերություն, անշուշտ, կա և կլինի: Բայց այնպես չէ, որ մի բան պարոն Հաբարյանը նախաձեռնի, և ավարտին չհասցնենք:

– Այս համատեքստում ևս մի հարցի պարզաբանում ենք ուզում ստանալ: Բագրատ Հաբարյանը (Մեղրիի համայնքապետարանի անունից) դատական հայց էր ներկայացրել ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության: Արդյո՞ք նախարարության հետ այդ տարաձայնությունները մնում են, թե՞ Դուք ՏԿ և ենթակառուցվածքների նախարարության հետ տարաձայնությունները շարունակելու մտադրություն չունեք:

– Այդ հարցը փակված է, հայցադիմումը հետ ենք պահանջել: Ի սկզբանե դեմ եմ եղել այդ քայլին, համայնքապետի պաշտոնը ստանձնելուց հետո՝ այդ թեմայով, զրույց եմ ունեցել Բագրատ Հաբարյանի հետ: Չեմ կարծում, թե դա ճիշտ քայլ էր, մեր հարաբերությունները ոչ մեկի հետ չպիտի սրենք: Վարչապետի՝ Մեղրի կատարած վերջին այցի ժամանակ նաև տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանն էր այստեղ, զրույց ունեցանք, նա իր պատրաստակամությունը հայտնեց՝ միշտ աջակցելու Մեղրու համայնքին: Նաև այն համոզումն ունեմ, որ եթե Բագրատ Հաբարյանն ինչ-ինչ հարցեր ուներ պարոն Սանոսյանի հետ, կարող էր դա անել որպես ֆիզիկական անձ, այլ ոչ թե համայնքապետարանի անունից ու խնդիրն այդկերպ ինչ-որ առումով քաղաքականացնել:

– Մենք մասնակցել էինք համայնքի ավագանու անդրանիկ նիստին: Կարծեք՝ միասնություն չկար ավագանու անդամների միջև: Այժմ ինչպիսի՞ն է փոխհարաբերությունը համայնքի ղեկավարության և ավագանու միջև: Առանց կողմերի համագործակցության, կարծում ենք, դժվար կլինի:

– Սկզբնական փուլում այդպիսի իրավիճակ եղել է, մենք բաժանված ենք եղել առանձին թևերի... Միշտ պնդել եմ միտքը, որ պետք չէ նմանվենք հանրապետության խորհրդարանին, որտեղ պառակտվածությունն անցանկալի միջադեպերի է հանգեցնում: Մենք պիտի միաբան լինենք, անկախ նրանից, որ ես մեկին չեմ սիրի, մի ուրիշը՝ ինձ: Ասել եմ՝ լրիվ տարաձայնությունները թողնում ենք ձեր տանը, մասնակցում ավագանու նիստերին՝ ի շահ մեր համայնքի: Իսկ եթե կարծում են, թե մի բան մենք այնպես չենք անում, կարելի է նստել մի սեղանի շուրջ և հարթել տարաձայնությունները, ընդհանուր հայտարարի գալ:

– Կադրային փոփոխություններ նախատեսո՞ւմ եք համայնքապետարանի վարչական ապարատում, ենթակա հիմնարկներում:

– Կադրային փոփոխություններ չլինել չեն կարող, բայց կարծում եմ՝ դա կլինի նոր աշխատատեղերի ստեղծման ճանապարհով, կավելանա 2-3 աշխատատեղ՝ համայնքի գործառույթներից բխող: Արմատական փոփոխություններ չեն լինի, բոլորին ճանաչում եմ, ուղղակի մարդիկ ավելի սրտացավորեն պիտի կատարեն իրենց պարտականությունները՝ նոր պահանջների ոգով: Բոլորս աշխատելու ենք, չաշխատող, ծուլացող մարդ համայնքապետարանում չի լինելու: Պարզապես մարդկանց աշխատառոճը պիտի փոխենք, մարդիկ կան, որ պարապ նստել են, ժամանակ անցկացրել, այսուհետև բացառվելու է նման պահվածքը:

– Ըստ Ձեզ՝ որո՞նք են Մեղրի խոշորացված համայնքի առջև ծառացած առավել կարևոր հիմնախնդիրները:

– Մեղրի համայնքում ավելի խնդրահարույց է եղել ու կա ջրի խնդիրը՝ խմելու և ոռոգման: Խնդիրը լուծելու համար գրություն ենք հղել և՛ մարզպետարան, և՛ տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարություն, ինչը հավանության է արժանացել: Խորհրդային Միության օրոք նախատեսվում էր Լիճքի ջրամբարի կառուցումը, նաև Զվար գետի ջրերը հետագայում խողովակներով հասցվեցին մինչև Ալվանքի, Շվանիձորի ամառային արոտավայրեր: Որքան տեղյակ ենք, երկու այդ հարցի վերաբերյալ կառավարությունում նախագիծ և նախահաշիվ են պատրաստում: Եթե այդ հարցերը լուծվեն, բնակիչները մեծապես գոհ կլինեն: Մյուս խնդիրների լուծումը մեր ուժերի և հնարավորությունների սահմաններում է:

– Հիմա ոռոգման ամենաեռուն շրջանն է, այս պահին ինչպե՞ս եք գնահատում ոռոգման համակարգի վիճակը, և ինչպիսի՞ն է համայնքապետարանի փոխհարաբերությունը Մեղրու ջրօգտագործողների ընկերության հետ:

– Ոռոգման համակարգի գործունեությունն այս պահին համարում եմ բավարար, պարբերաբար հանդիպում ենք տարածաշրջանի ՋՕԸ-ի ղեկավարի հետ, քննարկում ենք ընթացիկ խնդիրներ: Եվ եթե օգոստոսին Մեղրի և Արաքս գետերում ջուրն այնքան պակասի, որ չկարողանանք ինքնահոս եղանակով ոռոգման ջուր մատակարարել, ապա կաշխատեցնենք պոմպերով ջուր մղելու տարբերակը:

– Վերջին մեկ-երկու տասնամյակում Մեղրիում մի երևույթ ենք նկատել. անտերության մատնված հողակտորներ, չորացող այգիներ, չմշակվող տնամերձեր: Արդյո՞ք չեք մտածում, որ գույքագրում կարելի է կատարել և դրանց հետագա ճակատագիրը քննարկել: Համենայն դեպս, ժամանակին այդ այգիները, հողակտորները մշակվում էին, իսկ հիմա դրանք տխուր պատկեր են ներկայացնում:

– Ձեր նշած չմշակվող այգիները հիմնականում բարձրադիր գոտում գտնվողներն են, որտեղ ջրի խնդիր կա: Ասեմ նաև, որ Մեղրի համայնքի բնակիչները շատ աշխատասեր են, եթե մի կտոր հող են գտնում, ծառ են տնկում: Իհարկե, չեմ բացառում, որ կան անմշակ հողամասեր, որոնց տերերը Մեղրիում չեն ապրում, կամ կան այնպիսիք, որ ոչ իրենք են մշակում հողակտորը, ոչ էլ հանձնում ուրիշներին՝ մշակելու:

– Յուսիս-հարավ ճանապարհի՝ Մեղրիի հատվածում աշխատանքները մեկնարկել են, ինչպե՞ս եք գնահատում այդ երևույթը, արդյո՞ք համագործակցում եք շատերի հետ, ի՞նչ հեռանկար եք կապում դրա հետ: Մեղրիի տարածքով անցնելիս որոշ մարդկանց հողամասեր գերակա շահ են ճանաչվել. ցավեցնող պրոցես է, այգիներ են վերանալու: Այդ մասին Ձեր կարծիքը:

– Կարևորելով ճանապարհի նշանակությունը՝ հանդիպում ենք և՛ ճանապարհաշինարարների, և՛ նրանց ղեկավարների հետ: Ճիշտ է, իրականացվող աշխատանքներն առայժմ ակտիվ փուլ չեն թևակոխել, բայց խոստումնալից են, նույնը վերաբերում է մաքսատանն իրականացվող աշխատանքներին: Այդտեղ շինարարական ընկերության փոփոխություն է սպասվում: Ասեմ՝ ամենօրյա հետաքրքրություն ենք ցուցաբերում՝ մանավանդ Յուսիս-հարավ ճանապարհի շինարարության առումով:

– Իսկ տեղացի բանվորներ, մասնագետներ ընդգրկվա՞ծ են ճանապարհի շինարարության մեջ:

– Տեղացիներ ընդգրկված են: Մենք էլ ճանապարհաշինական ընկերությանը դիմում ենք խնդրանքով, միջնորդում ենք, որ նաև Արցախից տեղահանված մարդիկ ներգրավվեն ճանապարհի շինարարության մեջ, մանավանդ Վարդանիձորի և Լեհվազի մոտակայքում: Հիմնականում այդ բնակավայրերում են տեղավորվել Արցախից տեղահանված մեր հայրենակիցները: Ընդհանուր առմամբ՝ Արցախից տեղահանված մոտ 170 մարդ է բնակություն հաստատել Մեղրի համայնքում: Եվ նրանց զբաղվածության հարցն այդ կերպ ենք փորձում լուծել:

– Մեղրու սահմանապահ ջոկատը, իր գլխավոր գործառույթից բացի, համայնքում աշխատատեղերի խնդիր է լուծում: Ի՞նչ փոխհարաբերություններ կան Մեղրու սահմանապահ ջոկատի և համայնքապետարանի միջև:

– Այդ հարաբերություններն ամուր հիմքերի վրա են, կան երկուստեք համագործակցություն և փոխըմբռնում:

– Իսկ հարաբերությունն իրանական կողմի հետ... Մեղրին Իրանի Իսլամական Հանրապետության որևէ կոնկրետ համայնքի հետ բարեկամություն անո՞ւմ է, թե՞ այդ ամենը համապետական ծրագրերով է իրականացվում:

– Հարաբերություններ կան Սպահան քաղաքի հայ համայնքի հետ: Իսկ ընդհանրապես գործնական հարաբերություններ ունենք ԻԻՀ Կապանում հյուպատոսության գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամի հետ: Այս անգամ Իրանի գլխավոր տոնի՝ Նովրուզին նվիրված միջոցառում կազմակերպեցինք Մեղրիում՝ հյուպատոսի և հյուպատոսարանի աշխատակիցների մասնակցությամբ: Նախատեսել ենք իրանական կողմի հետ աշնանը Մեղրիում կազմակերպել նռան փառատոն: Նաև բանակցում ենք Սպահանի հայ համայնքի հետ, որպեսզի Մեղրիի դպրոցականների մի խումբ, իմ գլխավորությամբ, օգոստոսի վերջին կամ սեպտեմբերին այցելի Սպահան, հաղորդակցվի իրանահայ իրենց հասակակիցների հետ, իրանական մշակույթի հետ:

– Տարածաշրջանի խոշոր գործատուն է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը, ի՞նչ գործնական հարաբերություններ, համատեղ ծրագրեր ունեք:

– Այսպես ասեմ՝ կոմբինատը մեր հույսն է, գործնական հարաբերություններ կան կոմբինատի տնօրենության հետ, հաճախակի հանդիպումներ ենք ունենում: Այն ամենը, ինչ ծրագրել ենք իրականացնել Մեղրի և Ագարակ քաղաքներում, շուտով կներկայացնենք կոմբինատի տնօրինությանը:

– Վերջին շրջանում թեժացել են խոսակցությունները Մեղրու միջանցքի առնչությամբ: Դրանք ի՞նչ անդրադարձներ են ունենում մեղրեցու մտքերի, հոգեբանության վրա:

– Ուրախալի է, որ մեր անմիջական հարևանը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը, կտրականապես դեմ է Հայաստանի ինքնիշխանությունից դուրս միջանցքի ստեղծմանը: Այդ երկրի ղեկավարությունը հստակ արտահայտել է իր դիրքորոշումը, որ սահմանների փոփոխություն չի լինի: Յուրաքանչյուր մեղրեցի ևս այն հաստատ համոզմանն է, որ նման բան չի կարող լինել:

ՀՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ և ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Հայագիտական միջազգային կոնգրեսի շրջանակում տեղի է ունեցել "THE SPIRITUAL CITADEL OF SYUNIK: TATEV" պատկերագրքի և MEMAS օտարալեզու գիտական պարբերականի շնորհանդեսները

Սյունիքում, Հայագիտական միջազգային կոնգրեսի շրջանակում, տեղի է ունեցել "The Spiritual Citadel of Syunik: Tatev" («Սյունյաց հոգևոր միջնաբերդը. Տաթև», հեղ.՝ Մատենադարանի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Արսեն Հարությունյան) պատկերագրքի և MEMAS (Matenadaran: Medieval and Early Modern Armenian Studies, խմբագիր՝ Մատենադարանի միջնադարյան գրականության և բանասիրության բաժնի վարիչ, բան.գ.դ.՝ Արամ Թոփչյան) օտարալեզու գիտական պարբերականի շնորհանդեսները:



Երկու հրատարակությունների շնորհանդեսները վարել են Հարվարդի համալսարանի Մաշտոցի անվան հայագիտության ամբիոնի պրոֆեսոր Քրիստինա Մարանցին և Համբուրգի համալսարանի պրոֆեսոր Յոստ Գիպերտը:

Ելույթներով հանդես են եկել Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանը և տնօրենի գիտական գծով տեղակալ Վահե Թորոսյանը:

Պատկերագիրքը հրատարակվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ: MEMAS-ի հրապարակմանը (բաց հասանելիությամբ) աջակցում է ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն: Պարբերականը հրատարակում է միջազգային ճանաչում ունեցող Brepols հրատարակչությունը:

MEMAS-ի առաջին համարում տեղ են գտել միջազգային ճանաչում ունեցող հայագետների հոդվածներ:

24.07.2024

ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆ. «Սյունիքում ամեն քար, ամեն լեռ, ամեն քառակուսի սանտիմետր տարածք ներծծված են հայկականությամբ ու նախնյաց պատմությամբ, և այդ ամենը հավաստող փաստերն անհերքելի են»

Ինչպես արդեն հաղորդել ենք՝ Սյունիքում՝ «Տաթևեր» ճոպանուղու «Հալիձոր» կայանում, Հայագիտական միջազգային կոնգրեսի շրջանակում, հուլիսի 22-ին տեղի են ունեցել "The Spiritual Citadel of Syunik: Tatev" («Սյունյաց հոգևոր միջնաբերդը. Տաթև», հեղ.՝ Մատենադարանի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Արսեն Հարությունյան) պատկերագրքի և MEMAS (Matenadaran: Medieval and Early Modern Armenian Studies, խմբագիր՝ Մատենադարանի միջնադարյան գրականության և բանասիրության բաժնի վարիչ, բան.գ.դ. Արամ Թոփչյան) օտարալեզու գիտական պարբերականի շնորհանդեսները:

Շնորհանդեսների ավարտից հետո զրույց ենք ունեցել Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարանի) տնօրեն Արայիկ Խզմալյանի հետ:

– Պարոն Խզմալյան, ողջունում ենք Ձեր այցը Սյունիք, կուզեինայինք, որ համառոտ ամփոփեիք Հայագիտական միջազգային կոնգրեսի, ինչպես և կոնգրեսի շրջանակում տեղի ունեցած շնորհանդեսների արդյունքը:

– Շնորհակալ եմ շատ: Հայագիտական միջազգային կոնգրես անցկացնելու գաղափարը ծնվեց իմ՝ որպես Մատենադարանի տնօրեն պաշտոնավարելու առաջին իսկ օրերից, քանզի հայագիտական տարբեր շրջանակների հետ սկսեցի շփվել, Մատենադարանի գիտաշխատողներից հետաքրքրվել՝ հայագիտական կենտրոնների, ամբիոնների, առհասարակ միջազգային հայագիտության վիճակի վերաբերյալ: Մի տարօրինակ բան պարզվեց՝ շատ մեծ բաց կա իրազեկվածության տեսակետից՝ ինչքան ամբիոններ կան, ամբիոններում ովքեր են աշխատում, յուրաքանչյուր ամբիոն ինչ խնդիր ունի, համագործակցության ինչ ինտենսիվություն կա այդ ամբիոնների միջև: Եվ ակնհայտ դարձավ, որ այդ նույն խնդիրը կա՝ մեր ձեռագրական հոգևոր կենտրոնների հետ կապված:

Մի կարևոր պատմական իրադարձություն էր դա, որ խոշոր ձեռագրական կենտրոնները՝ Զմմառ, Անթիլիաս, Վենետիկ, Վիեննա, Երուսաղեմ, Պոլիս, Էջմիածնի Մայր աթոռ, համախմբվեցին մեկ սեղանի շուրջ: Քննարկմանը մասնակցում էր կրթության, գիտության, մշակույթի ոլորտի քաղաքական պատասխանատուն, և ըստ էության մենք խոսում էինք նույն օրակարգի, նույն խնդիրների և նույն նպատակների մասին, ու շատերը սեղանի շուրջ նոր միայն իրար հետ ծանոթացան:

Մենք այսօր ունենք արտաքին մարտահրավերներ՝ ոչ միայն ռազմական ոլորտին առնչվող: Տեղեկատվական դաշտում նույնպես մեծ պատերազմ է այսօր ընթանում Հայաստանի դեմ:

Ի՞նչ ենք մենք անում, որպես տարբեր օղակի պատասխանատուներ, կանխելու համար ապատեղեկատվությունն այս տարածաշրջանում:

Սկսել ենք միասնական օրակարգ ձևավորելու գործից: Նախ՝ սա գիտաժողով ու գիտական բանավեճի հարթակ չէ: Սա առավելապես հայագիտության կազմակերպման, հայագիտության առաջխաղացման և միասնական միջազգային օրակարգ ձևակերպելու հարթակ է: Սա հարթակ է՝ ճշտելու՝ յուրաքանչյուր համալսարան ինչ գործունեություն է ծավալում հայագիտության ոլորտում: Իսկ կոնգրեսին մասնակցող համալսարանները միջազգային ճանաչում ունեն՝ Հարվարդի, Օքսֆորդի, Բոլոնիայի, Բուդապեշտի... Այստեղ են 16 երկրից ժամանած օտարազգի հայագետներ:

Երբ հաճախ ասում ենք հայագիտության կենտրոնը, առանցքը Հայաստանն է, այս միտքը հենվում է սոսկ բանավոր ձևակերպման վրա: Գործնականում ի՞նչ քայլեր ենք ձեռնարկում, որ միջազգային գիտական հանրությունն իսկապես Հայաստանն ընկալի որպես հայագիտության կենտրոն:

Ուզում եմ միանգամից ասել՝ քանի որ Մատենադարանը միջնադարագիտական կենտրոն է, առաջիկայում մեր հիմնական ուղղվածությունը լինելու է հայագիտության միջնադարագիտության շերտը: Եվ երբ տարբեր պաշտոնյաների հետ քննարկում էի նման մի հարթակ ձևավորելու ու հայագիտական կոնգրես հրավիրելու խնդիրը, ինձ հարց էին տալիս՝ իսկ ի՞նչ է հայագիտությունը:

Եթե մենք փորձենք բացատրել, թե ինչ է հայագիտությունը, շատ հեռու կգնանք: Դա մի ճանապարհ է՝ գրերի գյուտից սկսած մինչև Թումանյան, Կոմիտաս... Եվ ամեն ինչ կարող ենք տեղավորել այս հասկացության մեջ:

Բայց ինչո՞ւ Մատենադարանը պիտի ստանձնի առաջամարտիկի դերը. որովհետև միջազգային հայագիտական հանրությունը հետաքրքրված է գերազանցապես միջնադարագիտական շրջանով:

Մատենադարանն այն մեծ պատուհանն է, որ շատ ավելի ազատ ու արագ կհամախմբի միջազգային շրջանակները: Թե դա ինչ ծիլեր կտա՝ ժամանակը ցույց կտա: Բայց ուզում եմ ասել՝ բուն գործը սկսելուց և ամփոփելուց հետո՝ զեկուցումները, որոնք ներկայացվել են, պիտի վերլուծվեն, համադրվեն: Եվ կկազմվի վերլուծական մի փաստաթուղթ, որը կներկայացվի ԿԳՄՍ նախարարությանը, նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին: Այնուհետև մեր կոլեգաների հետ կմշակենք գիտական կապերի խորացման տարբեր ծրագրեր, որոնց համար գուցե ստեղծվի նոր պետական դրամաշնորհ: Այնպես որ՝ ամեն ինչ դեռ առջևում է:

Սա առաջին խոշոր քայլն էր՝ միմյանց տեսնելու, միմյանց լսելու, ուղղակի հարցեր տալու: Եվ դա չէր դրսևորվում միայն քննարկումների ժամանակ, այլև հյուրանոցի սեղանի շուրջ, թեյ խմելիս, մասնավոր զրույցների ժամանակ: Երեկ մինչև ուշ երեկո՝ տարբեր համալսարանների առաջատար գիտնականների հետ Գորիսում քննարկել ենք հնարավոր հեռանկարները:

– Թեև մեր զրույցի գլխավոր թեման Հայագիտական միջազգային կոնգրեսն է, բայց չեմ կարող չօգտագործել առիթը և չասել՝ գնահատելի է Ձեր վերաբերմունքը Սյունիքի հանդեպ, որը նկատել ենք դեռևս այն ժամանակ, երբ Դուք ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալն էիք: Այսօրվա շնորհանդեսներն ասվածի շարունակությունն են: Տաթև սրբավայրի հետ կապված հրատարակությունը դրա վառ վկայությունն է:

– Կարծում եմ՝ նկատել եք, որպես ԿԳՄՍ նախարարի տեղակալ, ձգտում էի բոլոր փառատոները, բոլոր համերգային ծրագրերն ուղղորդել Սյունիք: Այն համոզումն ունեմ, որ դա պիտի լինի համապետական դիրքորոշում՝ ամեն ինչ դեպի Սյունիք: Ինչ էլ անենք, դրա զգալի մասը պիտի լինի Սյունիքում:

Եվ այս պատկերագրքի առումով ասացի՝ մի մնայուն արժեք պիտի դրվի սեղանին: Մենք կասենք, կխոսենք, կգնանք, բայց ի՞նչ ենք դնում սեղանին:

Սկսեցի հետաքրքրվել՝ ինչ կարող ենք հրատարակել այդ օրերին: Իմ տեղակալը՝ Վահե Թորոսյանը, հուշեց, որ մեր ավագ գիտաշխատողը՝ Արսեն Հարությունյանը, բավականին խորությամբ ուսումնասիրել է Տաթևի վանական համալիրի պատմությունը...

Պատկերագրքի վերնագիրն ինքս եմ որոշել՝ «Սյունյաց հոգևոր միջնաբերդը.

Շարունակությունը՝ էջ 6

ԱՐԱՅԻԿ ԽՉՄԱԼՅԱՆ. «Սյունիքում ամեն քար, ամեն լեռ, ամեն քառակուսի սանտիմետր տարածք ներծծված են հայկականությամբ ու նախնյաց պատմությամբ, և այդ ամենը հավաստող փաստերն անհերքելի են»

Լույս է տեսել «Սյունյաց հոգևոր միջնաբերդը. Տաթև» պատկերագիրք-ուսումնասիրությունը

Հուլիսի 22-ին «Տաթևեր» ճոպանուղու «Հալիձոր» կայանում տեղի ունեցավ Արսեն Հարությունյանի հեղինակած «Սյունյաց հոգևոր միջնաբերդը. Տաթև» պատկերագիրք–ուսումնասիրության շնորհանդեսը, որը կազմակերպել էր Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը (Մատենադարանը):

Շնորհանդեսը սկսելուց առաջ զրուցեցինք պատկերագիրք-ուսումնասիրության հեղինակ, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ, Մատենադարանի ավագ գիտաշխատող Արսեն Հարությունյանի հետ:

– Պարոն Հարությունյան, Ձեր հեղինակած գրքի շնորհանդեսն է: Ներկայացրեք, խնդրեմ, գիրքը՝ համառոտաբար:

– Գիրքը նվիրված է Սյունյաց հոգևոր կենտրոն Տաթևի վանքի գրավոր ժառանգությանը: Այսինքն՝ ամբողջացրել ենք Տաթևի վանքի վիմագրական և ձեռագրական ժառանգության առանցքային դրվագները: Վիմագրերի միջոցով ցույց ենք տվել Տաթևի վանքի շինարարական փուլերը, զարգացման ընթացքը: Վերընթաց ու հետընթաց տատանումներ. այդ ամբողջը լուսաբանված է աղբյուրագիտական նյութի հիման վրա:

Ամփոփել ենք ձեռագրական ժառանգությունը, մասնավորապես խոսել ենք ձեռագրերի ժամանակագրական և քանակական ընդհանուր նկարագրի մասին, լուսաբանել ենք ձեռագրերի մանրանկարչական արվեստը, այսինքն գեղազարդմանն ենք անդրադարձել: Եվ վերջապես, այդ ձեռագրերի հիշատակարանների միջոցով փորձել ենք ցույց տալ Տաթևում ձեռագրական ավանդույթի ողջ պատմությունը՝ սկսած 13-րդ դարից մինչև 19-րդ դարը ներառյալ, որովհետև, դժբախտաբար, 13-րդ դարից վաղ ձեռագիր Տաթևից չունենք: Այդ առումով ուշագրավ է Ստեփանոս Օրբելյանի հաղորդումն առ այն, որ 1170 թվականին՝ Բաղաբերդի գրավմամբ, ոչնչացվեց նաև Տաթևի վանքի՝ այնտեղ ի պահ տրված ավելի քան 10 հազար ձեռագիրը: Եվ այսօր, պարզվում է, ձեռագրերի ընդհանուր պատկերը՝ ժամանակագրական առումով, 13-րդ դարից ի վեր է: Եվ ուրեմն՝ Տաթևը ձեռագրակենտրոն է եղել դեռևս 9-10-րդ դարերից, ու այդ մասին վկայում է հենց ինքը՝ Ստ. Օրբելյանը, բայց այն, որ ձեռագրերը մեզ չեն հասել և ունենք 13-րդ դարից այս կողմ ձեռագրեր, ինքնին վկայում է՝ պատմագրի հաղորդումը լիովին հավաստի է:

– Եվ ի՞նչ բաժիններից է բաղկացած գիրքը:

– Գիրքը բաղկացած է երկու մեծ բաժնից, 1-ին մասը նվիրված է վիմագրությանը: Վանքի վիմագրական հիշատակությունները, իրենց հերթին, բաժանված են երեք բաժնի: Առանձնակի ներկայացված են շինարարական արձանագրությունները, 2-րդ մասում նվիրատվական արձանագրություններն են: Երրորդում՝ հիշատակագրությունները:

Շինարարական արձանագրությունները ներկայացված են ըստ փուլերի, այսինքն՝ սկսած 9-րդ դարավերջից, երբ Հովհաննես եպիսկոպոսի օրոք Տաթևի վանքը շինվեց, նոր շինություններով համալրվեց և հետագա նորոգումներով ու կառույցներով լրացվելով՝ հասավ մինչև 19-րդ դարը:

Նվիրատվություններին ենք անդրադարձել, ընդ որում՝ չենք հրատարակել միայն այն վիմագրերը, որոնք արդեն հրատարակված են: Բազմաթիվ սրբագրումներ են արված նախորդ հրատարակություններում տեղ գտած վիմագրերում: Բոլոր արձանագրություններն ուղեկցվում են նոր արված լուսանկարներով և գրչանկարներով, ինչը շատ կարևոր է վիմագրագիտության տեսանկյունից: Երբ նյութն ուղեկցվում է փաստական վավերագրերով, տվյալ դեպքում գրչանկարով և լուսանկարով, ընթերցողն ավելի է համոզվում վերծանություններում: Եվ վերջապես, շատ կարևոր բազմաթիվ նոր արձանագրություններ ենք դրել գիտական շրջանառության մեջ:

Ձեռագրական ժառանգության մասին... Տաթև գրչակենտրոնից (կարող ենք վստահաբար ասել) մեզ է հասել մոտ 300 ձեռագիր, ընդ որում՝ այդ ձեռագրերի մի մասը գրված է Տաթևում և համանուն անապատում, իսկ մյուս մասը պարզապես պահվել է Տաթևում: Այսինքն՝ Տաթևը ոչ միայն գրչության կենտրոն է եղել, այլև ձեռագրապահպան կենտրոն, ունեցել է մատենադարանային նշանակություն, և պատահական չէ, որ Տաթևը նույնպես ունեցել է իր գրատունը: Տաթևի ձեռագրերը շատ հայտնի են... 1900-ականների սկզբներին դրանք տեղափոխվել են նախ՝ Մայր աթոռ սուրբ Էջմիածին, այնուհետև՝ Ազգային գրադարան, իսկ այսօր դրանք հանգրվանել են Մ. Մաշտոցի անվան մատենադարանում:

– Պատկերագիրք–ուսումնասիրությունը լույս է տեսել անգլերեն լեզվով: Իհարկե, շատ կարևոր է, որ աշխարհը նաև այդ գրքով ծանոթանա մեր հոգևոր-մշակութային արմատներին, բայց (սովորաբար) նման գործերը նախ հրատարակվում են հայերեն լեզվով, հետո նոր թարգմանվում: Այս դեպքում հակառակ սկզբունքով եք առաջնորդվել...

– Նախաձեռնողները նպատակահարմար գտան նախևառաջ գիրքը դիտարկել որպես անցաթուղթ, Սյունիքը դիտարկել որպես հոգևոր միջնաբերդ և այդ միջնաբերդի մասին տեղեկույթը առաջին հերթին հասանելի դարձնել օտարալեզու հանրությանը, միջազգային լսարանին: Գաղտնիք չէ՝ ես իմ հարցազրույցներում քանիցս նշել եմ, որ տևական ժամանակ իրականացված իմ այս աշխատանքի արդյունքը (ավելի քան 10 տարի է՝ զբաղվում եմ Տաթևով) կհրատարակվի նաև հայերեն լեզվով: Ընդ որում՝ հայերեն տարբերակն ավելի ամբողջական կլինի: Կընդգրկվեն նաև տեղեկություններ շրջակա գյուղերի մասին՝ հին Հալիձոր, հին Շինուհայր, հին Խոտ, հին Հարժիս... Լիահույս եմ, որ առաջիկա 1-2 տարվա ընթացքում մենք հայերեն տարբերակը կունենանք:

– Ո՞վ էր հովանավորողը՝ թարգմանություն, տպագրություն...

– Այո, դա ևս շատ կարևոր է: Գիրքը հրատարակվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության տրամադրած դրամաշնորհի միջոցներով, Մատենադարանի նախաձեռնությամբ: Շատ կարճ ժամանակահատվածում ենք տեղավորվել, և ուրախությամբ պիտի փաստեմ՝ հասցրել ենք անել առավելագույնը: Ու այսօր ընթերցողն ունի Տաթևի մասին առաջնային գաղափար կազմելու բոլոր նախադրյալները, բոլոր դրվագները գրքում արտացոլված են: Չկա որևէ առանցքային կետ, որին անդրադարձ արված չլինի՝ և՛ մանրանկարչության, և՛ որմնանկարչության, և՛ ճարտարապետական առանձնահատկությունները, բայց, բնականաբար, շեշտը դրված է աղբյուրագիտական նյութի վրա հիմնված վիմագրությանն ու ձեռագրերին:

- Դուք նշեցիք վիմագիր արձանագրությունների մասին, բայց պատկերաքանդակներին հասցրե՞լ եք անդրադառնալ:

- Պատկերաքանդակներին անդրադարձել ենք այնքանով, որքանով նախորդ հրատարակություններում դրանք արտացոլված են եղել: Ավելի խորությամբ անդրադարձել եմ մի նորահայտ արձանագրության, որ վերջերս ենք հայտնաբերել Տաթևում. Եղիա վարդապետի արձանագրությունն էր՝ նրա դիմաքանդակին կից, ու այդ քանդակն իր հորինվածքային լուծումներով, պատկերագրական առանձնահատկություններով ուղղակիորեն նույնանում է Տաթևի գլխավոր՝ Սբ Առաքելոց եկեղեցու արևելյան պատի որմնախորշերի վերնամասում՝ քիվերի կենտրոնում պահպանված դիմաքանդակների հետ, որոնց անդրադարձել է Ստեփան Մնացականյանը՝ իր «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը» գրքում: Անդրադարձել է նաև Անատոլի Յակոբսոնը, հետագայում նաև հոդվածներով են շրջանառվել այդ հարցերը, բայց այս ֆորմատով, ընդհանուր գրքի մակարդակով, առաջին դեպքն է:

– Իսկ Եղիա վարդապետից ուրիշ ի՞նչ գործեր ունենք քանդակում:

– Ենթադրելի է, որ նրա ձեռակերտն են ու նրա ստեղծագործությունն են նաև վանքում պահպանված մնացած բոլոր դիմաքանդակները: Այսինքն՝ ձեռագիրը, ոճային, պատկերագրական առանձնահատկությունները նույնն են, բայց ստույգ ստորագրությամբ նրա անվանակիր՝ ոչ: Այդ ամենն արտացոլված է գրքում, թվագրել եմ 9-10-րդ դդ., այսինքն և՛ քանդակը, և՛ տառաձևերի հնագրական առանձնահատկությունները մեզ թույլ են տալիս վստահաբար ասել՝ գործ ունենք Տաթևի վանքի վաղ ժամանակաշրջանի վիմագրության հետ:

– Դե ինչ, ընդունեք մեր շնորհավորանքը՝ հրաշալի պատկերագրքի լույսընծայման կապակցությամբ: Նաև մեր շնորհակալությունը՝ Սյունիքի պատմամշակութային ժառանգության հանդեպ տարիներ շարունակ ցուցաբերվող ուշադրության համար: Հուսով ենք՝ առաջիկա մեկ-երկու տարում, ինչպես նշեցիք, կհրատարակվի նաև գրքի հայերեն տարբերակը, այն էլ՝ մերձակա գյուղերի վերաբերյալ հնագիտական նյութերի ընդգրկմամբ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Սկիզբը՝ էջ 5

Տաթև»: Եվ մի բան էի խնդրել՝ հնարավորինս թեթևացնել գիտական բաղադրիչը, դարձնել դյուրամարս, բայց ընթացքում էլի գիտական պահեր եղան: Շատ ակնահաճո, շատ հետաքրքիր, հիմնարար մի աշխատություն ստացվեց, որ եկավ լրացնելու տեղեկատվական այն բացը, որ ունենք միջազգային հարթակներում:

Այն համալսարանները, որոնց ներկայացուցիչներն այստեղ են, շատ քիչ հայագիտական գրականություն ունեն օտար լեզվով: Փոխնախարար եղած ժամանակ առաջարկս եղավ՝ ստեղծել հայ մշակույթն օտար լեզուներով ներկայացնելու դրամաշնորհային մի ծրագիր, որի շրջանակում բազմաթիվ կարևոր գրքեր՝ տարբեր լեզուներով, հրատարակվեցին՝ սկսած Իրանի հայկական մշակութային ժառանգությունից, Արցախ-Ուտիքի մշակութային ժառանգությունից... Ահա դրամաշնորհի շրջանակում ընթերցողի սեղանին դրվեց այս պատկերագիրքը:

Մենք պիտի գիտակցենք, որ մեծ քայլերով պիտի գնանք առաջ: Հայ ժողովուրդը, հասարակությունն այսօր իրավունք չունեն մանր քայլերով ընթանալու: Իհարկե, մեծ քայլերն ունեն ռիսկեր, բայց վիճակն այնպիսին է, որ ռիսկերի պիտի դիմենք, չվախենանք, պիտի մտածենք մեծ ծրագրերի մասին, միջազգային գիտական հանրությունը Հայաստանի բարեկամը դարձնելու մասին: Բայց զուտ խնդրանքով բարեկամ չեն դառնում: Մենք չպիտի խնդրենք: Մենք պիտի լինենք այնպիսին, որ մարդիկ ցանկանան բարեկամություն անել: Եվ կազմակերպվածության այն մակարդակը, այն որակը, որ ունեցանք այս կոնգրեսի շրջանակում, մեծագույն հիացում է առաջացրել բոլորի մեջ: Յուրաքանչյուր մասնակից քանիցս կրկնում էր կոնգրեսի՝ հաջողված լինելու մասին, իսկ դա նշանակում է՝ մարդիկ ձգտելու են մեզ հետ գործընկերային հարաբերություն ստեղծել:

– Դուք մեծ գործ եք անում մեր ժողովրդի մշակութային արժեքներն աշխարհին ներկայացնելու ուղղությամբ, բայց կուզենայինք, որ այս գիրքը տպագրվեր նաև հայերեն: Հետաքրքիր է՝ Սյունիքի վերաբերյալ ի՞նչ ծրագրեր ունի Մատենադարանը:

– Պատկերագիրք-ուսումնասիրությունը կհրատարակվի նաև հայերեն:

Մեծ ցանկություն ունենք անգլերենով հրատարակել Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը»: Կարծում եմ՝ դա ևս կլինի մի շատ զորեղ հրատարակություն:

Եվ ինչ է ցույց տալիս այդ ամենը. Սյունիքում ամեն քար, ամեն լեռ, ամեն քառակուսի սանտիմետր տարածք ներծծված են հայկականությամբ ու նախնյաց պատմությամբ, և այդ ամենը հավաստող փաստերն անհերքելի են: Մեր հարևաններն ինչ ֆինանսական ներդրումներ անեն, ինչ աշխատանք էլ տանեն, նման թարգմանական մի աշխատությունը սեղանին դնելով՝ կարող ենք պատասխանել բազմաթիվ հարցերի: Պարզապես չպիտի հապաղենք...

– Կրկին շնորհակալություն և հաջողություններ: Հարգանք Ձեզ, որ Սյունիքի մշակութային արժեքները փորձում եք հանրայնացնել աշխարհով մեկ:

– Ուզում եմ «Սյունյաց երկրի» հարթակն օգտագործել և իմ հայրենակիցներին ասել հետևյալը. լավ ժամանակներում ուժեղ լինելը մեծ բան չէ, բարդ ժամանակներում պետք է ուժեղ լինել: Եվ նոր եմ հասկանում Հովհաննես Թումանյանի «Քեֆ անողի քեֆը չի պակսի» հեքիաթի իմաստը, որովհետև լավ ժամանակներում քեֆ անելը մեծ բան չէ, վատ ժամանակներում զվարթ ապրելն է կարևոր, ուստի և մաղթում եմ, որ սյունեցու զվարթության մի տոկոսն անգամ չնվազի:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Սահմանազատման ինչպիսի՞ կերպ ենք ակնկալում իրական Սյունիքում

Սկիզբը՝ էջ 1

ղությամբ՝ 2020 թ. պատերազմից հետո, մի քանի անգամ ռազմական գործողություններ է ձեռնարկել և ամեն անգամ որոշակի տարածք բռնազավթել՝ մայիս 2021 թ., նոյեմբեր 2021 թ., մարտ և սեպտեմբեր 2022 թ., մարտ-ապրիլ 2023 թ.: Ի՞նչ կարգավիճակ ունեն մինչև հիմա օկուպացված այդ տարածքները:

Այնուհետև՝ իրավական ի՞նչ փաստաթղթերի կամ քարտեզների հիման վրա է Գորիսի տարածաշրջանի Շուռնուխ գյուղը 2021 թ. հունվարին կիսվել (ի դեպ, խորհրդային օրերում գյուղի վարչական տարածքը՝ արևելյան ուղղությամբ, մեկ-երկու կմ հեռու էր բնակավայրից):

Այնուհետև՝ իրավական ի՞նչ փաստաթղթերի կամ քարտեզների հիման վրա են Գորիս-Կապան, Կապան-Եղվարդի ենթաշրջան, Կապան-Ճակատեն ճանապարհների կարևոր հանգույցները հայտնվել Ադրբեջանի ենթակայության ներքո:

Երրորդ. 2020 թ. դեկտեմբերի 18-ին Սյունիքը կանգնեց անպատկերացնելի, որևէ տրամաբանության մեջ չտեղավորվող փաստի առջև: Հայաստանի պաշտպանության նախարարը՝ Վաղարշակ անունով, նախապես եկավ և հրահանգեց՝ Սյունիքի պաշտպանության արևելյան առաջնագծի մարտական դիրքերը թողնել ու նահանջել՝ դրանք հանձնելով թուրքին: Արդյունքում կազմաքանդվեց տարածաշրջանի պաշտպանական առաջնագիծը և թշնամու ռազմական սպառնալիքի տակ հայտնվեց Սյունիքը՝ արևելյան սահմանի ամբողջ երկարությամբ:

Հիմա խնդիրը Վաղարշակ Հարությունյան արարածին պատասխանատվության ենթարկելու մեջ չէ, այլ խայտառակ այդ գործարքին առնչվող հանգամանքների բացահայտման մեջ, որպեսզի (գոնե հետայսու) բացառվի նման ամոթալի ու ծաղրուծանակ պարունակող երևույթի կրկնությունը:

* * *

Սահմանազատման գործընթացը սկսելուց առաջ պարտավոր ենք գույքագրել և սեղանին դնել իրավական բոլոր փաստաթղթերը՝ Սյունիքի տարածաշրջանում՝ հայ-ադրբեջանական սահմանների փոփոխություններին առնչվող՝ Հայաստանի առաջին հանրապետության ժամանակներից ի վեր:

Մասնավորապես, սեղանին պետք է դրվեն 1920-ականներին Սյունիքի տարածաշրջանում կատարված սահմանազատման-սահմանագծման արդյունքներն արտացոլող փաստաթղթերը: Հիշենք՝ այդ գործընթացն իրականացվել է Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի ներկայացուցիչներից կազմված պետական հանձնաժողովի կողմից՝ Զանգեզուրի գավառի և Կարմիր Քյուրդիստանի միջև սահմանները ճշգրտելու նպատակով: Հայաստանի կողմից հանձնաժողովում ընդգրկված էր մեր մեծ Ակսել Բակունցը, որի զեկուցումներից որոշակի պատկերացում ենք կազմում կատարված աշխատանքների և արդյունքների մասին: Ընդ որում՝ նրա գրառումներում բավականին տեղեկություններ կան ներկայումս (արհեստականորեն) վիճելի դարձած տարածքների վերաբերյալ:

Բացի այդ, սեղանին պետք է դրվի այն փաստաթուղթը, որը ստեղծվել է 1980-ականներին՝ նաև Սյունիքի ուղղությամբ կատարված սահմանազատման աշխատանքի շնորհիվ: Հայաստանի կողմից Վլադիմիր Մովսիսյանի մասնակցությամբ աշխատած այդ հանձնաժողովին աջակցում էին Սյունիքի մեջ մտնող շրջանների ներկայացուցիչները, որոնց մեծ մասը ողջ է. այսօր էլ պատմում-ներկայացնում են, թե ինչպիսի մանրամասնությամբ և հետևողականությամբ են ճշգրտել Սյունիքի սահմաններն ադրբեջանական Զանգելան, Կուբաթլի, Լաչին և Քելբաջար շրջանների հետ:

Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների կողմից ստեղծված այդ հանձնաժողովի աշխատանքն ավարտին է հասցվել, իսկ արդյունքները հաստատվել են կողմերի ստորագրությամբ:

Սահմանային հարցերով հանրաքվե անցկացնելուց առաջ մեր հանրությունը պետք է դուրս եկած լինի բարոյահոգեբանական այն ծանր վիճակից, որում հայտնվել է 2020-ի կապիտուլյացիայից և դրան հաջորդած նվաստացուցիչ իրադարձություններից հետո:

Պատճառները, որ տվյալ փաստաթուղթը չի հանրայնացվում ու գործընթացի հիմքում չի դրվում, համոզիչ չեն: Մինչդեռ տվյալ փաստաթղթի գաղտնազերծումն ու սահմանազատող հանձնաժողովի սեղանին դնելն առանցքային հարցերից մեկն է:

* * *

Մի քանի պայման կամ սկզբունք, որ սահմանազատման գործընթացում պետք է համարվի պարտադիր կամ անշրջանցելի:

ա) Ադրբեջանը, առանց որևէ նախապայմանի, օկուպացիոն իր զորքերը պետք է դուրս բերի Սյունիքի բռնազավթված տարածքներից:

Խորհրդային Միության օրերում Սյունիքի շրջանները՝ Ադրբեջանի հարակից շրջանների հետ ունեցել են հստակ սահման՝ սանտիմետրերի ճշգրտությամբ:

Ուստի և՝ պետք է վերականգնվի Սյունիքի տարածքային ամբողջականությունը, մանավանդ որ հանրապետության իշխանությունները կարևորում են 1991 թ. դեկտեմբերի 21-ին ստորագրված Ալմա Աթայի հռչակագիրը, որի մեջ պարզորոշ ամրագրված է՝ **«Ճանաչել և հարգել միմյանց տարածքային ամբողջականությունն ու գոյություն ունեցող սահմանների անխախտելիությունը»:**

Վարչապետն էլ Շինուհայրում ասաց՝ **«Առայժմ Խորհրդային Միության օրոք գոյություն ունեցած սահմաններն են վերականգնվում»:** Դե ուրեմն՝ նախևառաջ վերականգնենք մեր սահմանները, ինչը ենթադրում է ադրբեջանական օկուպացիոն զորքերի դուրսբերում Սյունիքից:

բ) Սահմանազատման գործընթացը սկսելիս անհրաժեշտ է պարզորոշ հայտարարել՝ ո՞ր քարտեզով է կատարվելու սահմանների ճշգրտումը Սյունիքում: Ու պետք է հիմնավորվի՝ ինչո՞ւ հենց այդ քարտեզով, և իրավական ի՞նչ հիմքեր ունի տվյալ քարտեզը:

Ոչ մի պարագայում չի կարելի իբրև գործիք կիրառել GPS-ի կամ Google-ի հնարավորությունները:

գ) Սահմանազատումը պետք է կատարվի կողմերի հավասարության պայմաններում՝ 2020-ի նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայի տրամաբանությունից դուրս:

դ) Գործընթացը պետք է իրականացվի միայն ու միայն միջազգայնորեն ճանաչելի սկզբունքների հիման վրա: Դրանք շարադրված են Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության քարտուղարության կողմից ընդունված «Պետական սահմանի սահմանազատում և սահմանագծում: Հրատապ հարցեր և լուծումներ» վերտառությամբ փաստաթղթում, որն ընդունվել է 2017 թ. դեկտեմբերին և դիտվում է իբրև կիրառման ենթակա ուղեցույց՝ հետխորհրդային երկրների միջև սահմանազատման աշխատանքների իրականացման համար:

Տեղյակ ենք՝ այդ փաստաթուղթը խորհրդատվական բնույթ ունի: Բայց ինչո՞ւ նկատի չունենալ, որ այն ընդունված է անվտանգության ոլորտում միջազգային ամենահեղինակավոր կազմակերպության կողմից:

Ինչո՞ւ չտեսնել, որ այդ փաստաթղթի հիմնադրույթները, կիրառվելու դեպքում, Ադրբեջանի ու Հայաստանի միջև երկարատև խաղաղության հիմքեր կարող են ստեղծել (եթե, իհարկե, կողմերը տարածաշրջանում կայուն խաղաղություն հաստատելու անկեղծ և ստույգ մտադրություն ունեն):

* * *

Սահմանային հարցերին առնչվող ենթադրյալ հանրաքվեի մասին...

Շինուհայրում վարչապետն ասաց՝ **«Հնարավոր է՝ գա մի պահ, երբ Հայաստանն ու Ադրբեջանը նոր պայմանավորվածություն ձեռք բերեն: Տեղեր կան, կարող է լինել գաղափար, որ ասենք՝ 100 քառակուսի մենք ձեզ զիջենք, 100-ն էլ դուք մեզ տվեք, բայց պետք է արվի հանրաքվեով...»:**

Մեծ իմաստով հանրաքվեն երկրի առջև ծառացած կարևորագույն հարցերը կարգավորելու քաղաքակիրթ ձևերից մեկն է, աշխարհում ընդունված գործելակերպ: Սակայն, հանրապետությունում այսօր կա՞ պատշաճ մթնոլորտ, որի պայմաններում հանրությունը կարող է ողջամիտ դիրքորոշում ունենալ և այդ դիրքորոշումն անկաշկանդ արտահայտել:

Սահմանային հարցերով հանրաքվե անցկացնելուց առաջ մեր հանրությունը պետք է դուրս եկած լինի բարոյահոգեբանական այն ծանր վիճակից, որում հայտնվել է 2020-ի կապիտուլյացիայից և դրան հաջորդած նվաստացուցիչ իրադարձություններից հետո: Մենք չպիտի լինենք այն երկիրը կամ ժողովուրդը, որն ամեն ինչ անում է թշնամու պարտադրանքով, առավել ևս՝ սահմանները ճշգրտելիս: Մեր հանրության մտածելակերպից պիտի դուրս եկած լինի հայտնի կեղծ դրույթը, թե Ադրբեջանի պայմաններով չառաջնորդվելու պարագայում պատերազմ կլինի:

Հակառակ դեպքում՝ հանրաքվեի կշեռքի մի նժարին կդրվի «խաղաղությունը», մյուս նժարին՝ թուրքի կանոններով և շահերով չառաջնորդվելու ենթադրյալ հետևանքները:

Նման հանրաքվեի արդյունքներն այսօր արդեն կարելի է պատկերացնել:

Աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները, ցավոք, ցույց են տալիս՝ խաղաղությունն ամենաբարձր ու նվիրական արժեքը չէ, որ գոյություն ունի ժողովուրդների և պետությունների կյանքում: Կան հարցեր, որոնք ավելի կարևոր են, քան պարտադրված խաղաղությունը: Այդ հարցերից են պետության սահմանների անձեռնմխելիության, ազգի արժանապատվության, անկախ պետականության լինելիության ապահովումը:

Եվ ուրեմն՝ պետք չէ պատերազմներով մեզ վախեցնել և հանուն «խաղաղության» տարածքային զիջումների գնալ:

Եվ ուրեմն՝ արժե մտածել՝ արդյո՞ք երկրի ներսում ստեղծված այս իրավիճակում կարող ենք սահմանային հարցեր լուծել հանրաքվեով:

Հիշենք նաև մեր սիրելի մայրաքաղաքում (և ոչ միայն) ժամանակին մոլեգնող ցնորական պոստուլատը՝ *Արցախը հանձնենք, որ խաղաղություն լինի, մենք էլ հանգիստ ապրենք: Այնպես որ՝ չի բացառվում, որ մայրաքաղաքի սրճարանային ակտիվիստները կամ ֆեյսբուքյան գործիչները, օրինակ, հանրաքվեի ժամանակ հարց առաջադրեն՝ մեր ինչի՞ն են պետք Իշխանասարը կամ Սև լիճը կամ Ներքին Հանդը, թողեք խաղաղություն լինի (թեկուզև պարտադրված), որ հանգիստ ապրենք...*

* * *

Պարտադրված սահմանազատումը, անկասկած, պատերազմական գործողությունները վերսկսելու լեգիտիմ հիմք է...

Հազարերորդ անգամ փաստենք՝ Սյունիքը մոլորակի այն անկյուններից է, որտեղ իրական, չպարտադրված խաղաղությունը դարեր շարունակ երազանք է եղել ու մնում:

Սակայն սահմանազատման քողի տակ թուրքին որևէ տարածք (թեկուզ և շատ փոքր) հանձնելը, վերջին հաշվով, խաղաղություն չի կարող բերել: Ավելին, նման սահմանազատումը ցանկացած ժամանակ լեգիտիմ հիմք կարող է ծառայել՝ պատերազմը վերսկսելու համար:

Գնալ կեղծ կամ պարտադրված սահմանազատման ճանապարհով՝ նշանակում է ամեն օր սպասել ռազմական գործողությունների վերսկսմանը:

Իսկ բոլոր նրանք, ովքեր նման «սահմանազատմամբ» մեզ խաղաղություն են խոստանում՝ առնվազն մոլորված են կամ իրականությունից կտրված:

Պետական սահմանը ցանկացած պետության համար գերագույն սրբություն համարվող երևույթ է:

Ուստի և՝ անպայման զերծ մնալ արհեստական, շինծու, պարտադրված սահմանազատումից ու վերականգնել այն սահմանները, որ ունեցել ենք խորհրդային օրերում կատարված սահմանազատման արդյունքում, որ ունեցել ենք 2020 թ. նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայից առաջ ու այդ պահին:

Դրանից հետո միայն կարելի է անդրադառնալ վիճելի հարցերին, այն էլ՝ սույն հրապարակման մեջ մատնանշված հարցերում որոշակիություն մտցնելուց և հատկապես ադրբեջանական զորքերը հայրենական մեր տարածքներից դուրս բերելուց հետո:

Սահմանազատման որևէ այլ գործելակերպ ի սկզբանե ընդդեմ Սյունիքի է և որևէ դրական ազդեցություն չի կարող ունենալ տարածաշրջանում կայուն խաղաղություն հաստատելու բաղձալի գործում:

Հ. Գ. Հոդվածը պատրաստ էր հրապարակման, երբ հայտնի դարձավ՝ սահմանված ժամկետի ավարտին՝ հուլիսի 1-ին, Երևանն ու Բաքուն չեն համաձայնեցրել սահմանազատման հանձաժողովների կանոնակարգի նախագիծը, ինչի մասին Մհեր Գրիգորյանի և Շահին Մուստաֆաևի գլխավորած հանձնաժողովները պայմանավորվել էին ապրիլի 19-ին: Ինչո՞ւ չստացվեց սահմանված ժամկետում կանոնակարգի նախագծի համաձայնեցումը. հարցի վերաբերյալ տարբեր և մտահոգիչ տեսակետներ կան, որոնք առանձին խոսակցության նյութ կարող են լինել:

Առայժմ նշենք միայն՝ կանոնակարգի հաստատումից է կախված նաև սահմանազատման հետագա ընթացքը, այդ թվում՝ սահմանազատվող մյուս հատվածների հերթականությունը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
3 ՀՈՒԼԻՍԻ 2024Թ.

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը նշեց Հանքագործի և մետալուրգի օրը

Սկիզբը՝ էջ 3

նակներն առաջինը հանձնվեցին ընկերության գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիյին և նրա առաջին տեղակալ Վարդան Ջհանյանին:

Այնուհետև տոնական միջոցառումը շարունակվեց դահլիճում: Բարեմաղթանքի խոսքով հանդես եկավ ընկերության գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին: Շնորհավորելով ներկաներին մասնագիտական տոնի առթիվ, նա, մասնավորապես, ներկայացրեց ձեռնարկության զարգացման տեսլականը.

«Այս տարում հասնելու ենք հանքաքարի վերամշակման ամենաբարձր ցուցանիշին՝ 23 մլն տոննա: Համեմատության համար ասենք, որ 1952 թվականին՝ կոմբինատի հիմնադրման տարում, արդյունահանվել և վերամշակվել է 215 հազար տոննա հանքաքար, ինչն այսօր իրականացվում է երեք օրում: Արդեն երեք տարի հետո պլանավորում ենք հանքաքարի վերամշակումը հասցնել մինչև 30 մլն տոննայի, լեռնային զանգվածինը՝ մինչև 65 մլն տոննայի:

Ընկերությունն իրականացնում է ռազմավարական ծրագիր՝ կապիտալ ներդրումների գծով, որի շնորհիվ 2023 թվականին և այս տարում կծախսենք մինչև 50 միլիարդ դրամ: Անցած տարում և 2024 թ. առաջին կիսամյակում ձեռք ենք բերել 105 միավոր տեխնիկա, միայն լեռնային աշխատանքների իրականացման նպատակով ընկերությունը համալրվել է 10 «Կոմացու» մակնիշի ինքնաթափով, վեց էքսկավատորով, իսկ այս տարվա առաջին կիսամյակում ձեռք ենք բերել «Բելազ» մակնիշի 14 ինքնաթափ՝ 130 խորանարդ մետր թափքի տարողությամբ, մի խոսքով՝ միայն բացահանքի համար ձեռք ենք բերել 17 միլիարդ դրամի տեխնիկա: Նախորդ տարվանից ընկերությունում սկսվել է ավտոմատացման և թվային տրանսֆորմացիայի գործընթաց, որ կավարտվի 2026 թվականին: Ընկերության թվայնացումը որակապես նոր կառավարում է բոլոր արտադրական գործընթացներով հանդերձ, դա թափանցիկության և հսկողության ժամանակակից մակարդակ է նշանավորում»:

Գլխավոր տնօրենի խոսքի մի մասն առնչվում էր ընկերության որդեգրած սոցիալական քաղաքականությանը, մասնավորապես, ձեռնարկությունում ընթացիկ տարում սկսել է գործել ուսումնական կենտրոնը, որ հնարավորություն տրվի երիտասարդ աշխատակիցներին հավելյալ գիտելիքներ ստանալ, ընդլայնել մտահորիզոնը: Իսկ ընդհանրապես ընկերությունը պատրաստվում է սոցիալական և բարեգործական նպատակների համար հատկացնել վեց միլիարդ դրամ՝ ուղղված աշխատակիցների բժշկական ծառայություններ մատուցելուն, ավիաուղևորափոխադրումներին, բարեգործական օգնությանը, սուբվենցիոն ծրագրերին սատարելուն և այլ նպատակների:

Բանախոսը ևս մի ուշագրավ փաստ հրապարակեց. ընկերությունը վերջին չորս տարում հանրապետության պետբյուջե ավելի շատ գումար է փոխանցել, քան 2021 թվականին նախորդած 20 տարում:

Օրվա խորհրդի առթիվ հանքագործներին շնորհավորեց և մարզի զարգացման գործում լեռնահանքարդյունաբերության դերը կարևորեց Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանը:

Ընկերության 22 աշխատակից արդյունավետ և երկարամյա աշխատանքի համար պարգևատրում ստացավ: Հանդիսավոր մասից հետո մշակույթի պալատի երաժիշտների ուժերով տրվեց համերգ: Իսկ երեկոյան կողմ ՀՊՄԿ ՓԲ ընկերության հարակից հրապարակում հանդես եկան հանրապետության շոու բիզնեսի ներկայացուցիչները:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԱՐԱ ԱՅՎԱԶՅԱՆ. «Գորիս-Կապան ճանապարհը և Շուռնուխի մի մասը Ադրբեջանին փոխանցելու մասին ԱԳՆ-ն տեղյակ չի եղել»

Ստորև՝ հատված Արա Այվազյանի հետ հարցազրույցից:

«Ազատություն» - Պարոն Այվազյան, 2020 թվականի դեկտեմբերից Ադրբեջանին անցավ Գորիս-Կապան ճանապարհը, և արդեն 2021-ի հունվարին Ադրբեջանին նաև փոխանցվեց Շուռնուխ գյուղի մի մասը: Դուք տեղյա՞կ եք, թե իրավական ինչ փաստաթղթերի հիման վրա այս տարածքների հանձնումը, փոխանցումը տեղի ունեցավ:

Արա Այվազյան - Տեսեք, եղել է Անվտանգության խորհրդի նիստ, այդ Անվտանգության խորհրդի նիստը տեղի ունեցավ Արցախում դրան նախորդող նոր ճգնաժամային իրավիճակին, և այդ նիստերից երեք նիստ է եղել, ես երկուսին եմ մասնակցել, ապա մեկնել եմ արտասահման, եղել են քննարկումներ, ես հիմա այդ քննարկումների բովանդակության մասին չեմ կարող բարձրաձայնել, բայց հետագայում պարզվեց, որ հայկական կողմը ստորագրել է ինչ-որ հուշագիր Ադրբեջանի հետ և երևի ռուսական խաղաղապահների հետ, ինչի մասին Արտաքին գործերի նախարարությունը տեղյակ չէր:

«Ազատություն» - Հուշագիր, որով այդ տարածքները փոխանցե՞լ էին Ադրբեջանին:

Արա Այվազյան - Այդպես հայտարարվեց: Անվտանգության խորհրդի ժամանակ տարբեր սցենարներ էին քննարկվում, որովհետև ադրբեջանցիները պահանջներ էին ներկայացրել, և տարբեր քննարկումներ էին տեղի ունենում, բայց որ ինչ-որ փաստաթուղթ կարող է ստորագրվի, առնվազն ես տեղյակ չեմ եղել, և հետագայում է դա պարզվել: Եվ երբ պարզվել է, ես դիմել եմ վարչապետի միջոցով Պաշտպանության նախարարություն, որ այդ փաստաթուղթը մեզ տրամադրվի: Իմ պաշտոնավարման ընթացքում՝ մինչև վերջ այդ փաստաթղթերին ես ծանոթ չեմ:

«Ազատություն» - Դուք չե՞ք տեսել այն փաստաթուղթը, որով Գորիս- Կապան ճանապարհը և Շուռնուխ գյուղի մի հատվածը փոխանցվել է Ադրբեջանին և պոստ ֆակտում եք իմացել, որ նման՝ եռակողմ հուշագիր է ստորագրվել:

Արա Այվազյան - Այո, եռակողմ կամ երկկողմ. տեղյակ չեմ անկեղծ»:

27.07.2024

ՄԵՂՐԻ ԿԱՄ ՊԱՅԾԱՌԱՆՈՒՆ ԳԱՎԱՌ ԱՐԵՎՅԱՑ ՏՈՒՆ

«Սյունյաց Երկիրը» սկսում է հերթական հատուկ համարի նախապատրաստությունը: Այն նվիրված կլինի Սյունյաց աշխարհի 12 գավառներից մեկին՝ Արևիքին:

Մեղրու տարածաշրջանին թերթի հատուկ համար նվիրելու գաղափարը մեզանում ծնվել էր դեռևս տասը տարի առաջ, բայց ինչ-ինչ պատճառներով նախաձեռնությունը սառեցվեց: Չնայած դրան՝ հաջողվեց հավաքել հսկայածավալ նյութ՝ տարածաշրջանին առնչվող: Հասցրեցինք նույնիսկ շրջագայել տարածաշրջանի բոլոր սրբավայրերով, հազարամյակների խորքից եկող բնակավայրերով, որոնց մի մասը, ցավոք, անմարդաբնակ է կամ նույնիսկ ավերակված:

Մեր պարբերականի ենթադրյալ համարը, ըստ նախագծի, կլինի Մեղրի-Արևիքի մասին առաջին և նախօրինակը չունեցող ընդհանրական ժողովածու:

Ուստի և՝ հորդորում, խնդրում, առաջարկում ու կոչ ենք անում բոլոր կարող ուժերին՝ մասնակցել համարի նախապատրաստմանը:

Բոլոր հիմքերը կան ասելու, որ ծրագրված համարը կհրատարակվի գիտական հիմնավորվածությամբ, մեր կյանքի բոլոր ոլորտների համառոտ (բայց և ամբողջական) ընդգրկմամբ և, իհարկե, պատշաճ ձևավորմամբ ու բարձրորակ տպագրությամբ:

Նյութերը, առաջարկությունները, նկատառումները, նաև ծագող հարցերը խմբագրությանը կարող եք ուղարկել syuniacyerkir@mail.ru էլեկտրոնային հասցեով, ինչպես և 091459047 կամ 077459047 հեռախոսահամարներով:

Ուրեմն՝ մեզ և ձեզ բարի ընթացք, ստեղծագործական հաջողություններ:

01.07.2024

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց Երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 31.07.2024թ.: